

Ա.ԽՍՀ Լուսժողովուրդի Գլխադիւնար

63(07)

Ի-ՅԼ

# ԻՆՉՊԵՍ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՈՒՏԸ

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԱԴՐՈ և ԶՈՈՄԻ-  
ՆԻՄՈՒՄԻ ՄՍՍԻՆ՝ ԳՅՈՒՂԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒ-  
ԹՅԱՆ ՅԱՆՑԻ և ԳՅՈՒՂԱՏԸՆ-  
ՏԵՍԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Զ Ր Ո Ւ Յ Ց 4-րդ

ՅԱՆՔՍԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ և  
ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՐԸ Ե 5 Կ.



ԱՂԲՈՒՏՆԵՐ

Բաղն.—1930

14977



26.04.2013

Տպագրված է  
ԱՅՐՊԵՏՀՐԱՏԻ  
տպարանում  
Բագու, Բ.-Մոր-  
սկայա և Կրաս-  
նո-Պրեսնենսկ.  
Վոդոցների  
անկյուն:

63(07)

h-61

Զ Ր Ո Ւ Յ Ց 4-րդ

## ՑԱՆՔՍԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մենք տեսանք, Վոր բեքքը կարելի է բավա-  
կանաչափ բարձրացնել հողի լավ մշակման զա-  
նազան ձևերով, պարարտացումով, կանոնավոր  
ջրելով, լավ ցանքսով և խամաքով: Բայց ավելի  
է բարձրանում բեքքը, յերբ դաշտում Վորոշ կարգ  
է սահմանվում, յերբ դաշտում ցանքսափոխու-  
թյուն է մտցրվում:

Ինչ է ցանքսափոխությունը

Ցանքսափոխություն է կոչվում, յերբ դաշ-  
տում ցանվող բույսերը միշտ կանոնավոր հա-  
ջորդում են միմյանց:

Եղ բանը պարզ լինելու համար որինակ բե-  
քենք, թե հիմի մեր դաշտերում, ասենք բամբա-  
կային ռայոնում, ինչ կարգ կա:

Սովորաբար ամեն մի տնտեսությունում մենք  
կտեսնենք հետևյալը.—

1) դաշտի մի մասը դատարկ է, Վոչինչ չի  
ցանված. 2) դաշտի մի մասում ցանված է ցո-

14927-57



րեն և գարի. 3) յերրորդ մասում բամբակ և ցանված:

Կանոնավոր հաջորդում են եղ մասերը մի-մյանց: Սովորաբար, վոչ: Յերբեմն հանգստացող դաշտի մասը չի ցանվում մի տարի, յերբեմն ել մի քանի տարի: Հանգստից հետո դաշտում յերբեմն ցանվում են ցորեն ու գարի, իսկ յերբեմն բամբակ: Շատ հաճախ միևնույն տեղը բամբակ ցանվում է մի քանի տարի շարունակ: Մի տարի ցանվում է ավելի ցորեն, մյուս տարին—ավելի բամբակ: Մի խոսքով՝ մշտական կարգ չկա, մշտական պլան չկա: Ի՞նչ կարգ կամ ցանքսափոխություն կարելի է մտցնել այդ պայմաններում:

### Ֆեռավյա ցանքսափոխություն

Ամենից հասարակ կարգ և հասարակ ցանքսափոխություն կունենանք, յեթե հերկը բաժանենք յերեք հավասար դաշտի և ես—1930 թվին եղ դաշտերում եսպիսի կարգ սահմանենք.—

| 1-ի դաշտ<br>հանգստացող<br>հող | 2-րդ դաշտ<br>ցորեն և գա-<br>րի | 3-րդ դաշտ<br>բամբակ |
|-------------------------------|--------------------------------|---------------------|
|-------------------------------|--------------------------------|---------------------|

Հաջորդ—31 թվին առաջին դաշտում մենք կցանենք ցորեն, յերկրորդում—բամբակ, յերրորդ դաշտը հանգիստ կթողենք և կունենանք՝

| ցորեն<br>և գարի                                               | բամբակ            | հանգստացող<br>հող |
|---------------------------------------------------------------|-------------------|-------------------|
| Հաջորդ—32 թվին ելի կփոխենք զանազան բույսերի տեղը և կունենանք՝ |                   |                   |
| բամբակ                                                        | հանգստացող<br>հող | ցորեն և<br>գարի   |

33 թվին մեր դաշտը կունենա են տեսքը, ինչ վոր 30 թվին:

Հանգստացող հողի և բույսերի ես կանոնավոր, մշտական փոփոխությունը դաշտում՝ կոչվում է ցանքսափոխություն:

Հենց հիմի պիտի ասենք, վոր վերը հիշված ցանքսափոխությունն որինակ է միայն: Են մասին, թե վոր ցանքսափոխությունն է լավ և ուղիղ, մենք կխոսենք հետո: Իսկ հիմի եղ ցանքսափոխությունը, կրկնում ենք, նրա համար ենք բերել, վոր պարզ լինի, թե ինչ է ցանքսափոխությունը:

### Ինչ ոգուս կա ցանքսափոխությունից

Ի՞նչ ոգուս է ստացվում, յեթե դաշտերում ցանքսափոխություն ենք մտցնում:

1. Ամեն մի բույս զանազան պահանջ է անում հողի սննդարար նյութերից և ամեն մի բույս տարբեր յերկարության արմատներ ունի:



Յեթե մենք ամեն տարի միևնույն տեղը միևնույն բույսը ցանենք, ամեն տարի բերքի հետ հողից կհեռացնենք միևնույն սննդարար նյութերը:

Իսկ յեթե ամեն տարի մենք փոխենք բույսերը, են ժամանակ զանազան խորության մեջ գտնվող բոլոր սննդարար նյութերը կոգտագործվեն հավասարաչափ և ուղիղ:

Նպակիով ցանքսափոխությունը թույլ է տալիս ամենամեծ չափով ոգտագործել այն բոլոր հարստությունը, ինչ վոր կա հողի մեջ:

2. Ամեն մի բույս իր աճման ժամանակ պահանջում է առանձին խնամք: Որինակ՝ ցորենը և գարին աճման ժամանակ համարյա վոչ մի խնամք չեն պահանջում: Իսկ բամբակը, կենսափը շարունակ խնամք են պահանջում իրենց աճման ժամանակ՝ հողը պետք է փխրել և մոլախոտերը վոչնչացնել:

Ուրեմն, յեթե շարունակ միևնույն տեղը ցանենք ցորեն և գարի, եղ դաշտում շատ կշատանան մոլախոտերը: Յեթե միևնույն տեղը փոփոխվում են ցորենն ու գարին և բամբակը, կենսափն ու կարտոֆելը, այսինքն ենալիսի բույսեր, վորոնք խնամք են պահանջում, եղալիսի դաշտում մոլախոտերի քանակությունը պակասում է:

3. Մեր շատ ուայոններում տնտեսությունը տարվում է արհեստական վոռոգմամբ (ջրելով): Ամեն մի բույս պահանջում է տարբեր քանակությամբ ջուր: Որինակ՝ բամբակն ավելի շատ ջուր է պահանջում, քան թե ցորենն ու գարին: Յեթե մեզնում մի տեղ շարունակ բամբակ բուսնի, եղ դաշտը շարունակ պիտի ջրվի. դրանից ել եղ դաշտը կարծրանում է: Միևնույն ժամանակ՝ ջրելիս միշտ հողի սննդարար նյութերը գնում են հողի տակի ջրերը: Մուղանի նման հողերում, յեթե միևնույն դաշտը շարունակ ուժեղ կերպով ջրենք «շոր»-եր կգոյանան:

4. Հողագործի մշտական թշնամիները զանազան վնասակար միջատները և հիվանդություններն են: Բայց պիտի ասել, վոր ամեն մի բույս ունի իր վորոշ վնասատուները: Են վնասակար միջատները և հիվանդությունները, վոր ապրում են բամբակի վրա, բոլորովին չեն վնասում ցորենին և գարուն: Յեվ, ընդհակառակը, ցորենի ու գարու վնասատուներն անվտանգ են բամբակի համար:

Յեվ յեթե մի տեղ շարունակ ցանենք միևնույն բույսը, ահագին քանակությամբ կշատանան եղ բույսի վնասատուները և բերքն ել կըսկսի քչանալ: Յերբ մենք մի դաշտում ցանում ենք զանազան բույսեր, դրանով մենք բավական



Թուլացնում ենք բոլոր ֆեոսատու միջատների և հիվանդութիւնների աշխատանքը:

5. Կան մի շարք շատ կարևոր բույսեր, վորոնց վրա մեր դյուղացին վաղուց պետք է ուշք դարձնեն. դրանք եսպես կոչված շաքիլավոր (լութիաձև) բույսերն են. նրանց շաքիլն են պատկանում մի ամբողջ շարք ոգտավետ բույսեր, որինսակ՝ լոբին, նոխուղը, վոսպը, բակլան և այլն: Եդ բույսերի շաքիլն են պատկանում շատ խոտեր, որինսակ՝ յոնջան, վիկը, առվուշտը, իշառվուշտը և այլն:

Ես բոլոր բույսերն, առաջին, շատ ոգտավետ են և շուկայում նրանց մեծ պահանջը կա:

Բացի եդ՝ նրանք շատ գնահատելի հատկութիւն ունեն հողի պտղավետութեան համար. այսինքն՝ եդ շաքիլավորների ցանելուց հետո հողում մնում է շատ ազոտ, վորը կարևոր սննդանյութ է, բոլոր բույսերին շատ անհրաժեշտ:

Նշանակում է, յեթե ցանքսափոխութեան մեջ մտցնենք եդ շաքիլավորների ցանքսը, մենք կավելացնենք հողի պտղավետութիւնը:

Ցանխափոխութիւնը բամբակային ուսոնում

Հիմի տեսնենք, թե ինչպիսի կանոնավոր դանքսափոխութիւն պիտի մտցնենք, որինսակ, բամբակի ուսոնում:

Եդ հարցը լուծելուց առաջ նշենք մեր բամբակային տնտեսութեան մի շատ կարևոր թերութիւնը, այսինքն՝ բամբակային տնտեսութեան մեջ (նույնպես և ուրիշ ուսոններում) միշտ պակասում է անասունների կերը:

### Խոտ ցանելու նշանակութիւնը

Կերի եդ մշտական պակասութիւնը շատ վատ է ազդում ամբողջ բամբակային տնտեսութեան վրա:

Կեր չկա, ուրեմն սոված է մնում լծկանը, նշանակում է դաշտը մշակող չկա: Իսկ բամբակի լավ բերք ստանալու համար պետք է լավ մշակել հողը:

Կերի պակասութեան պատճառով շատ տնտեսութիւններ ամեն ամառ գնում են ելլադ. իսկ դա շատ վատ է ազդում բամբակի բերքատուութեան վրա, վորովհետեւ ամառն աշխատող չի մնում:

Դրա համար ել հարկավոր է բամբակային տնտեսութիւնում խոտ ել ցանել՝ անասունների համար կեր պատրաստելու նպատակով:

Բամբակային ուսոնի համար ամենալավ խոտերն են յոնջան և վիկը, վորը ցանվում է դարու և վարսակի հետ:



Նրանց մեջ տարբերութիւնն են ե, վոր յոն-  
ջան բազմամյա բույս ե, իսկ վիկը մի տարվա:

Յոնջան պիտի ամառը շարունակ ջրել, իսկ  
գա ձեռնտու չե, վորովհետեւ ջուրը պիտի խլել  
բամբակից, ուրեմն և քչացնել բամբակի ցանք-  
սերը:

Վիկը ջրել ե պահանջում միայն դարնանը,  
յերբ սովորաբար ջուր շատ ե լինում: Դրա հա-  
մար ել նա բամբակին չի խանգարում:

Շղպիսով գլխավոր կերի բույսը պիտի լինի  
վիկը և եդ վիկը պիտի ցանել դաշտում:

Սրանից հետո պարզ ե, թե ինչ ցանքսափո-  
խութիւն ե լավ մտցնել բամբակային տնտեսու-  
թիւնում, յեթե մենք վորոշել ենք ցանել վիկ:

Մենք սկզբում, որինակի համար, բերել եինք  
եսպիսի ամենահասարակ ցանքսափոխութիւն՝

1) հանգստացող հող,

2) ցորեն և գարի,

3) բամբակ:

Յեթե մենք հիմի, հողն անոգուտ չթողնելու  
և տնտեսութեան մեջ կեր ունենալու համար,  
հանգստացող հողում վիկ ցանենք, կունենանք  
եսպիսի ցանքսափոխութիւն՝

1) վիկ,

2) ցորեն և գարի,

3) բամբակ:

Դա կլինի հասարակ յեռադաշտյան ցանքսա-  
փոխութիւն:

Բայց կարելի ե նաև 4 ու 5 դաշտյան ցանք-  
սափոխութիւն անել՝ նայած տնտեսութեան ա-  
ռանձնահատկութիւններին:

Որինակ՝

1) վիկ, 2) ցորեն և գարի, 3) բամբակ,  
4) բամբակ:

Կամ՝

1) վիկ, 2) ցորեն, 3) գարի, 4) բամբակ:

Պետք ե ասել նաև, վոր վիկը տալիս ե մեծ  
քանակութեամբ խոտ՝ դեսպատինից մոտ 250 փ.  
բացի դրանից վիկը շատ լավացնում ե հողը,  
նրան ավելի պտղավետ ե դարձնում, և նրանից  
հետո բերքը միշտ բարձրանում ե:

Վիկ կարելի ե ցանել և՛ դարնանը և՛ աշնանը:  
Աշնանը մեր ցանքսափոխութեան մեջ չի կարելի  
վիկ ցանել, վորովհետեւ բամբակի բերքը վերջ-  
նականապես քաղում ենք յերբեմն հունվար ամ-  
սին: Վիկ կարելի ե ցանել արդեն փետրվար ամ-  
սին, յեթե յեղանակը թույլ ե տալիս. են ժա-  
մանակ նրա հունձը կլինի մայիս ամսին:

Ինչ վերաբերում ե յոնջային, ավելի լավ ե  
քիչ քանակութեամբ ցանել ղորուղներում: Նա մի  
տեղ աճում ե մի քանի տարի, պահանջում ե  
շատ ջուր և խնամք:



Նրա բերքը շատ բարձր է լինում. մի դեպք-  
տինից յերբեմն ստացվում է 600—700 փուլթ  
խոտ:

Դժբախտաբար մեզնում խոտ քիչ են ցանում.  
ցանում են գլխավորապես Նախիջևանի հանրա-  
պետությունում և քիչ ել մյուս շրջաններում:

Յոնջայի ցանքսը միեւնույն տեղը մի քանի  
տարի մնալուց հետո, յերբ այլևս լավ բերք չի  
տալիս, պետք է նորից հերկել և տեղը ցանել  
ուրիշ բույս: Բամբակային ուայոնում յոնջայից  
հետո լավ է ցանել բամբակ: Յոնջայից հետո  
բամբակի շատ լավ բերք է ստացվում:

Նդպիսով զորուղներում մենք կունենանք  
եւպիսի ցանքսափոխություն՝

- 1) մի քանի տարի յոնջա,
- 2) յերկու կամ յերեք տարի բամբակ:

Ինչպես պետք է ցանխափոխություն  
մտցնել

Ինչպիսի ցանքսափոխություն պիտի մտցնել  
մեր զանազան ուայոններում:

Մենք կրեբենք եղբուր ցանքսափոխություն-  
ները. միայն պետք է հիշել, վոր եղ բոլոր ցանք-  
սափոխությունները միայն ընդհանուր պատկերն  
են տալիս: Ամեն մի կոլխոզում, առանձին գյու-  
ղում, նախ քան սերմափոխություն մտցնելը,

պետք է աչքի առաջ ունենալ, թե վորքան հող  
կա, վորքան ջրելու ջուր, բանվորական ձեռք,  
տնտեսություն համար վորքան կեր է հարկավոր  
և մի շարք ուրիշ հարցեր:

Դրա համար ել սերմափոխություն հարցը  
հասարակ հարց չէ և պետք է վճռել գյուղա-  
տնտեսների հետ միասին:

Այսպես, իբրև որինակ, զանազան տեղերի  
համար կարող են պետք գալ հետևյալ ցանքսա-  
փոխությունները:

Նայած թե հերկը քանի դաշտի է բաժանվում,  
ցանքսափոխությունները լինում են՝ յերկդաշտ-  
յան, յեռադաշտյան, 4—դաշտյան, 5—դաշտյան,  
6—դաշտյան:

1. Բամբակային ուայոնի համար ամենահա-  
սարակ ցանքսափոխությունը, ինչպես տեսանք,  
յեռադաշտյանն է, այսինքն՝

- 1) խոտ (վիկ կամ ուրիշ),
- 2) ցորեն, գարի,
- 3) բամբակ:

Յեթե, որինակ, ջուրն ամառը քիչ է լինում,  
յեռադաշտյան ցանքսափոխության տեղ կարելի  
է մտցնել 4—դաշտյան, այսինքն՝

- 1) խոտ,
- 2) ցորեն,
- 3) գարի,



4) բամբակ:

Կամ, յեթե ջուրը շատ է՝

1) խոտ,

2) ցորեն, գարի,

3) բամբակ,

4) բամբակ:

Վերցնենք ուրիշ, վոչ բամբակային դաշտա-  
յին ռայոն, որինակ Ղուբայինը: Նստեղ գլխավոր  
բույսը կենափն է: Կարելի է այսպիսի ցանքա-  
փոխություն անել՝

1) բոստան,

2) ցորեն,

3) կենափ,

4) գարի կամ վորսակ:

Նույն Ղուբայի շրջանի և մյուս շրջանների  
նախալեռնային գոտիներում կարելի է հետևյալ  
ցանքափոխությունը խորհուրդ տալ՝

1) ցել,

2) ցորեն,

3) կարտոֆել,

4) գարի:

Ես յերկու դեպքում հանձնարարվում ե խո-  
տը (ավելի լավ է յոնջա) ցանել առանձին դաշ-  
տում. մի քարի մնալուց հետո եղտեղ պետք է  
ուրիշ բույս ցանել, իսկ յոնջայի համար նոր տեղ  
հատկացնել:

Բայց կարելի է և եղ ցանքափոխություն-  
ների ժամանակ խոտը ցանել նույնպես, ինչպես  
վոր արել եինք բամբակային ռայոնում. եղ դեպ-  
քում մենք կունենանք. —

Ղուբայի շրջանի դաշտավայրում՝

1) խոտ,

2) ցորեն,

3) կենափ,

4) գարի կամ վարսակ:

Նույն շրջանի նախալեռնային գոտում՝

1) խոտ,

2) ցորեն,

3) կարտոֆել,

4) գարի:

Հիշված ցանքափոխությունները կարող են  
որինակ ծառայել նաև ուրիշ շրջանների համար:

Զաքաթալայի շրջանում, ուր վարում են և՛  
բրինձ և՛ կենափ, կարելի է այսպիսի 8—դաշտ-  
յան ցանքափոխություն ունենալ՝

1) բրինձ,

2) կենափ,

3) գարի,

4) յոնջա,

5) յոնջա,

6) յոնջա,

7) յեզիպտացորեն,

ՀՀ Ազգային գրադարան



NL0276994



8) ցորեն:

Նոխսու շրջանում, ուր ցանվում է բրինձ՝

1) բրինձ,

2) բրինձ,

3) հանգստացող հող,

4) խոտ:

Ձանազան չոր տեղերի համար կարելի է կազմել եսպիսի ցանքսափոխություն՝

1) ցել,

2) ցորեն,

3) գարի,

4) յեզիպատացորեն կամ նոխուզ,

5) գարի:

Առաջին հերթին անպատճառ պիտի ցանքսափոխություն մտցնել կոլխոզներում:

Կոլխոզն առանց ցանքսափոխության՝ առանց պլանի, առանց վորոշ կարգ-կանոնի տնտեսություն կլինի:

Իսկ կոլխոզային տնտեսությունը պիտի որինակ լինի շրջապատի տնտեսությունների համար:

Կոլխոզում հեշտ է ցանքսափոխություն մտցնել, վորովհետև տնտեսության հողը մի ամբողջ կտոր է:

Առանձին գյուղացիական տնտեսության մեջ ցանքսափոխություն մտցնելն անհնար է, յերբ հողը ցրված է զանազան տեղեր, ինչպես դա հաճախ պատահում է:

